ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի << Սիսիան համայնքի թիվ 1 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ը 2026 թվականի հուլիսի 02-ին հայտարարում է մրցույթ՝ <<Սիսիան համայնքի թիվ 1 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի դաստիարակի 2 թափուր պաշտոնի համար 0.625-ական դրույքաչափերով և << Սիսիան համայնքի թիվ 1 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի Անգեղակոթ բնակավայրի գործող խմբի մեթոդիստի՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալի թափուր պաշտոնի համար ՝ 0,5 դրույքով, դաստիարակի թափուր պաշտոնի համար՝ 0.56 դրույքով և երաժշտի թափուր պաշտոնի համար ՝ 0,5 դրույքով, <<Սիսիան համայնքի թիվ 1 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի Շաղատ բնակավայրի գործող խմբի դաստիարակի՝ 0.625 դրույքով և երաժշտի՝ 0,5 դրույքով թափուր պաշտոնների համալրման համար, <<Սիսիան համայնքի թիվ 1 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի Սառնակունք բնակավայրում գործող խմբի մեթոդիստի՝ նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական գծով տեղակալի՝ 0.5 դրույքով և դաստիարակի՝ 0.625 դրույքով թափուր պաշտոնների, <<Սիսիան համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի Ծղուկ բնակավայրի գործող խմբի մեթոդիստի թափուր պաշտոնի համար՝ 0.5 դրույքաչափով և դաստիարակի 2 թափուր պաշտոնների համար՝ 0.625-ական դրույքաչափերով, <<Սիսիան համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի Գորայք բնակավայրի գործող խմբի մեթոդիստի թափուր պաշտոնի համար՝ 0.5 դրույքաչափով և դաստիարակի 2 թափուր պաշտոնների համար՝ 0.625 դրույքաչափով:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնների համար ԿԳՄՍՆ 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված մանկավարժական կազմի աշխատողների պաշտոնների նկարագրերին համապատասխանող անձը: https://escs.am/am/news /21826

Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթը անց է կացվելու 2026 թվականի օգոստոսի 3-ին՝ ժամը 10:30-ին, ք. Սիսիան, Սիսական 17 հասցեում:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 8.30-ից մինչև 17:30-ը, բացի շաբաթ, կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է 2026 թվականի հուլիսի 29-ը, ժամը 17:30-ը ներառյալ:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել նաև https://www.sisian.am/ կայքում:

Մրցույթը անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝

https://escs.am/am/news/11978

Տեղեկությունների համար զանգահարել՝ 028323280 հեռախոսահամարին կամ այցելել << Սիսիան համայնքի թիվ 1 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ:

Հասցե՝ ք.Սիսիան, Սիսական 17

Էլ. փոստ՝ **tiv1nuh@sisian.am**:

Ա.Գասպարյան